ԳԻՏԱԿԱՆ ԻՆՖՈՐՄԱՑԻԱ
НАУЧНАЯ ИНФОРМАЦИЯ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆՏԻԿ ԴԱՐԱՇՐՋԱՆԻ ԵՐԿԱԹՅԱ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԸ

Հայաստանի անտիկ դարաշրջանի պատմության ուսումնասիրության համար շատ կարևոր նշանակություն ունի այդ դարաշրջանի տնտեսական կյանքի գլխավոր ճյուղի՝ գյուղատնտեսության ուսումնասիրությունը։ Վերջին երկու տասնամյակում Սովետական Հայաստանի տարածքում գտնվող անտիկ դարաշրջանի հուշարձանների՝ Գառնիի, Արմավիրի և Արտաշատի պեղումներից հայտնաբերված գյուղատնտեսական գործիքների ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս անելու որոշ դիտողություններ այդ հարցի վերաբերյալ։ Հիշյալ հուշարձանները գտնվում են Արարատյան դաշտում կամ նրա նախալեռնային շրջաններում, և այդ գործիքները մեծ մասամբ օգտագործվել են հացաբույսերի, այգեգործական և բանջարանոցային բույսերի մշակման համար։

Արարատյան դաշտի բնակիչները հազարամյակներ շարունակ զբաղվել են հացահատիկի և այգեգործական կուլտուրաների մշակմամբ։ Արդեն անտիկ դարաշրջանում, տեղի բնակչությունը հավանաբար օգտագործում էր դարերի խորքից եկող հարուստ ավանդույթները, ուներ բավական բարձր աստիճանի վրա կանգնած գյուղատնտեսություն, ինչպես նաև արտադրական գործիքներ։

Այս դարաշրջանի գործիքները հիմնականում պատրաստվում էին երկաթից, որը, որոշ բացառություններով, վատ է պահպանվում հողում։ Դրա հետևանքով դժվարանում է ուսումնասիրությունը ամեն տեսակի երկաթե առարկաների թե՛ հնագիտական և թե՛ մետալոգրաֆիական տեսակետից։ Գյուղատնտեսական գործիքների ճիշտ թվագրման համար կարևոր նշանակություն ունի նրանց շերտագրական տվյալների ուսումնասիրությունը։

Գառնիում հայտնաբերված գործիքները գտնվել են անտիկ շրջանի դամբարաններից կամ այդ նույն դարաշրջանին պատկանող շերտից, որն ընկած է ուշ միջնադարյան շերտի տակ և բրոնզեդարյան շերտից վեր[1]։

Արմավիրի շերտագրական պատկերը հատկապես լավ է արտահայտված բլրի արևմտյան լանջին, որտեղ հելլենիստական շերտը միջանկյալ դիրք է գրավում վերին՝ միջնադարյան և ամենաստորին՝ ուրարտական շերտերի միջև։ Գտնված բոլոր գործիքները ուղեկցվում են հելլենիստական շրջանին պատկանող խեցեղեն անոթների նմուշներով կամ այլ իրերով[2]։

Արտաշատի շերտագրական պատկերը համեմատաբար պարզ է, քանի որ քննության առարկա գործիքները հայտնաբերվել են № 1 և № 8 բլուրներից, որոնք հնագիտորեն միաշերտ են[3]։

Հայաստանի անտիկ դարաշրջանի հողամշակության գործիքներից դեռևս քիչ են հայտնաբերված, սակայն մեր ունեցած նմուշները որոշ պատկերացում են տալիս այդ շրջանի գործիքների ձևերի, չափերի, ինչպես և դրանց գործածական նշանակության մասին։

Քննարկման ենթակա առաջին գործիքը Արմավիրից հայտնաբերված բահն է (ՊՊԹ 2281/23), որը 26 սմ ընդհանուր երկարություն ունի[4]։ Նրա 16 սմ լայնության շեղբի երկարությունը 12 սմ է, իսկ 14 սմ երկարություն ունեցող վերնամասը բաղկացած է երկու ակոսավոր թեվերից, որի մեջ պետք է ագուցվեր փայտե կոթը (աղ. I, 1)։ Այս բահը իր ձևով և չափերով

---

[1] Б. Н. Аракелян, Гарни—I, Ереван, 1951. Гарни—II, Ереван, 1957.

[2] Գ. Ա. Տիրացյան, Հնագիտական աշխատանքները Արմավիրում, ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր» (Հաս. գիտ.), 1973, № 5։

[3] Բ. Ն. Առաքելյան, Հին Արտաշատ, Երևան, 1975։ Ժ. Դ. Խաչատրյան, Ա. Գ. Կանեցյան, Արտաշատի 8-րդ բլրի շերտագրությունը. ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր» (Հաս. գիտ.), 1974, № 9։

[4] Б. Н. Аракелян, О некоторых результатах археологического изучения древнего Армавира, «Պատմա-բանասիրական հանդես», 1969, № 4, էջ 172։ Առարկան հրատարակելիս Բ. Ն. Առաքելյանը այն համարել է արորի խոփ։ Մասնավոր զրույցի ընթացքում Բ. Ն. Առաքելյանը հայտնեց մեզ, որ նա վերանայել է իր կարծիքը և այժմ գտնում է, որ առարկան իրավացիորեն կարելի է բահ համարել։



Ил. I



Ил. II

բավական տարբերվում է նախորդ (ուրարտական) և հաջորդ (միջնադարյան) ժամանակաշրջանների բահերից։ Թոփրախ-Կալեի և Դվինի պեղումներից գտնված բահերը բավական նման են իրար և համարյա չեն տարբերվում այն բահերից, որոնք այժմ էլ օգտագործվում են գյուղատնտեսության մեջ։ Այս բահերի կոթի ամրացումը կատարվում էր միանգամայն այլ կերպ, իսկ աշխատող մասը շատ ավելի նեղ էր, քան Արմավիրի մեր օրինակինը։

Հողամշակման մյուս գործիքները Արտաշատի պեղումներից ձեռք բերված երեք բրիչներն են (աղ. I, 2, 3, 4. աղ. III, 1, 2, 3)։ Դրանք հիմնականում օգտագործվում էին բանջարաբոստանային կուլտուրաների մշակման ժամանակ. բրիչի օգնությամբ փխրեցվում էր հողը վարից հետո, փշրվում էին մեծ հողագնդերը, հողից առանձնացվում էին քարերը և մոլախոտերը։ Բահը և բրիչը անփոխարինելի գործիքներ էին մարգեր և առուներ պատրաստելու, ինչպես և ջրի հոսքը առուներում կարգավորելու համար։

Բրիչներից ամենամեծը (ՊՊԹ 73 թ. /123) ունի 18 սմ ընդհանուր երկարություն։ Ամենալայն մասը կազմում է նրա աշխատանքային ծայրը՝ 6,5 սմ։ Կոթառի մասը (որի մեջ խրվում էր փայտե կոթը) ստացվել է երկու կողերի երկայնական ելուստները դեպի ներս ծալելու միջոցով։ Կոթառի մասը կազմում է գործիքի կեսից ավելին։ Կոթը այդպես խոր հագցնելու նպատակն այն էր, որպեսզի շուտ չկոտրվեր և աշխատանքի ընթացքում դուրս չգար իր տեղից։

Երկրորդ բրիչը (ՊՊԹ 74 թ. /60) ընդհանուր առմամբ նման է առաջինին, բայց չափերով քիչ ավելի փոքր է, իսկ աշխատանքային մասը կեռ է, մինչդեռ նախորդի մոտ այն ուղիղ է։ Գործիքի ընդհանուր երկարությունը կազմում է 12,2 սմ, կոթառի մասը, որը պատրաստված է նույն եղանակով, ինչ որ առաջին բրիչինը, ունի 7 սմ երկարություն, իսկ աշխատանքային մասի լայնությունը 4,5 սմ է։ Բրիչի ծայրի կեռ լինելը հուշում է, որ այն հավանաբար օգտագործվել է բուկլիցի համար։

Վերջին՝ երրորդ բրիչը (ՊՊԹ 71 թ. /17) չափերով ամենափոքրն է և ձևով էլ տարբերվում է առաջին երկուսից, հիշեցնելով դուր։ Բրիչի ընդհանուր երկարությունը կազմում է 6 սմ։ Այն ունի խողովակաձև կոթառ, իսկ աշխատանքային ծայրը կոթառից սկսած աստիճանաբար լայնանում է, հասնելով մինչև 4 սմ-ի։ Ի տարբերություն նախորդ երկուսի, այստեղ գործիքի աշխատանքային մասը ավելի մեծ է, քան կոթառը։

Բոլոր երեք բրիչներն էլ թվագրվում են մ. թ. ա. II—մ. թ. I դդ.։

Վրաստանի հելլենիստական դարաշրջանի Վանի քաղաքի պեղումներից հայտնաբերված բրիչները, որ թվագրվում են մ. թ. ա. III—I դդ.[5], աղերսվում են մեր օրինակների հետ ինչպես ձևերով, այնպես էլ չափերով։ Կարելի է ենթադրել, որ բրիչների նման տիպը հելլենիստական դարաշրջանում բավական տարածված է եղել։

Մանգաղները Հայկական լեռնաշխարհում հանդիպում են սկսած էնեոլիթյան դարաշրջանից և հանդիսանում են հացաբույսերի բերքահավաքի գլխավոր գործիքը։ Սկզբնական շրջանում դրանք տարբեր նպատակների են ծառայել, ավելի ուշ նրանց ձևերի բազմազանությունը թույլ էր տալիս օգտագործել որոշակի նպատակների համար։ Արդեն բրոնզի դարից սկսած մանգաղների շեղբի աստիճանական կորացման և սայրի երկարացման շնորհիվ դրանք դառնում են ավելի արտադրողական։

Ուրարտական և վաղ հայկական դարաշրջանում Հայկական լեռնաշխարհում օգտագործվում էին բավական մեծ չափերի մանգաղներ, չնայած որ բրոնզեդարից եկող փոքր չափի օրինակները շարունակում են գոյություն ունենալ։ Անտիկ դարաշրջանի Հայաստանին ավելի բնորոշ են մանգաղների փոքր տեսակները, որոնք պահպանում են ձևերի և ուրվագծերի նմանությունը նախորդ դարաշրջանի օրինակների հետ։

Ուսումնասիրության ենթակա մանգաղները բաժանվում են երկու խմբի՝ ա) ոչ մեծ կորությամբ կոթառավոր մանգաղներ. բ) ընդգծված կորությամբ պոչուկավոր մանգաղներ։

Առաջին խմբի մանգաղները չորսն են (ՊՊԹ Արմ. 71 թ. /36, Արմ. 2583/41. Արմ. 2627/80 և Արմ. 2584/81), որոնք միմյանց մոտ են ինչպես ձևերով. այնպես էլ չափերով։ Դրանցից միայն մեկի մոտ է պահպանվել կոթառի մասը, որի վրա արված է փոքրիկ անցք ոսկրե կոթը գամի օգնությամբ ամրացնելու համար։ Մանգաղների երկարությունը 13,5—15,5 սմ է, լայնությունը՝ 3,5—4 սմ։ Բոլոր օրինակների մոտ նկատվում է աշխատանքային մասի՝ լեզմակի մաշվածությունը (աղ. I. 6. 8. 9. 10, աղ. III. 4. 5. 6)։

Մանգաղների երրորդ խումբը ներկայացված է երկու օրինակով (աղ. I. 5. 7. աղ. III. 7, ՊՊԹ Արմ. 2626/25. Արմ. 2585/15)։ Սրանց հիմնական տարբերությունը առաջին խմբից այն է, որ ունեն պոչուկ, որը մտնում էր փայտե կոթի մեջ, իսկ աշխատանքային մասը՝ շեղբը. ընդգծված կոր աղեղ է կազմում պոչուկի

---

5 «Ванн—II. Археологические раскопки», Тбилиси, 1976, աղ. 140։

հետ։ Շեղբերի երկարությունը ուղիղ գծով 14—16 սմ է, լայնությունը՝ 3,5—5,5 սմ։ Պոչուկի երկարությունն է 5,5—7 սմ, և դա թույլ է տալիս ենթադրել, որ այս մանգաղների կոթը բավական մեծ է եղել, որպեսզի ուժ գործադրելու համար հարմար լիներ։ Նշենք նաև, որ երկրորդ խմբի մանգաղները հունձի ժամանակ ավելի արդյունավետ են եղել, քան առաջինները, որովհետև աղեղի կորությունը և ավելի երկարուկ լինելը մեծացնում են աշխատանքի ժամանակ նրա օգտակար գործունեության գործակիցը։ Փոքր չափերի մանգաղները կարող էին օգտագործվել տնտեսության մյուս ճյուղերում, օրինակ՝ բանջարանոցային կուլտուրաների մշակման ժամանակ։

Քննարկվող բոլոր վեց մանգաղներն էլ հայտնաբերվել են հելլենիստական շերտից։ Սրանց այդ ժամանակին պատկանելը ապացուցվում է ոչ միայն ձևերով, այլև նույն շերտում հայտնաբերված՝ մ. թ. ա. III—I դդ. թվագրվող գունազարդ անոթների բեկորների և այլ իրերի առկայությամբ։ Մեր օրինակների նույնատիպ նմուշներ գտնված են Վրաստանի[6], Ադրբեջանի[7], մերձսևծովյան անտիկ հուշարձանների[8] պեղումների ժամանակ և նույնպես թվագրվում են հելլենիստական ժամանակաշրջանով։

Անտիկ դարաշրջանի Հայաստանը նաև այգեգործական երկիր էր, իսկ Արարատյան դաշտում պտղատու կուլտուրաների մշակման սովորությունը ուներ դարերի խորքից եկող ավանդույթներ։ Պեղումների շնորհիվ հայտնաբերված այգեգործական, կամ ավելի ճիշտ՝ խաղողագործական դանակները, ինչպես նաև այլ իրեղեն մնացորդները այդ են ապացուցում։

Հայաստանի հնավայրերից հայտնաբերված ամբողջական այգեգործական դանակները երեքն են՝ երկուսը Արմավիրի (ՊՊԹ 2627/126), մեկը (ՊՊԹ 74 թ. /14)՝ Արտաշատի[9] պեղումներից (աղ. II, 6, 7, աղ. III, 8, 9)։ Երեք օրինակներն էլ ձևերով մոտ են միմյանց, տարբերվում են հիմնականում չափերով։ Գործիքի կեռ շեղբը կազմում է նրա հիմնական աշխատանքային մասը, իսկ պոչը, աստիճանաբար նեղանալով, հագցվում էր փայտե կոթին։ Արմավիրի օրինակներից մեկը ամբողջական է և լավ պատկերացում է տալիս այս գործիքների ձևի ու չափերի մասին։ Դանակի ընդհանուր երկարությունը 21 սմ է, պոչի մասը՝ 12 սմ։ Աշխատանքային մասը՝ կեռ շեղբը, բավական լայն է՝ 6,5 սմ։ Լեզվակի աշխատող մասում պարզորոշ նկատվում է օգտագործումից առաջացած մաշվածությունը։ Արմավիրի երկրորդ դանակը և Արտաշատի օրինակը չափերով զիջում են առաջինին, իսկ նրանց թերի լինելը թույլ չի տալիս չափերը ճիշտ որոշել։ Այգեգործական այս դանակները կարող էին օգտագործվել ինչպես խաղողի էտի, այնպես էլ բերքահավաքի ժամանակ։ Հատկանշական է, որ նախորդ դարաշրջաններում այս գործիքը չի հանդիպում, թեև հնագույն ժամանակներից խաղողագործությունը Հայկական լեռնաշխարհում լայնորեն տարածված է եղել, որի անժխտելի ապացույցները հնագիտական նյութերն են և սեպագիր արձանագրությունների տվյալները։ Կարելի է ենթադրել, որ հիշյալ դանակների նախորդները հանդիսացել են կեռ դանակները, որոնք լայնորեն կիրառվել են տնտեսության մեջ ավելի վաղ դարաշրջաններում, միաժամանակ պահպանելով իրենց դերն ու նշանակությունը նաև հետագայում։

Մեր օրինակները, գտնված լինելով Արարատյան դաշտավայրի հուշարձանների ուշ հելլենիստական (մ. թ. ա. II—մ. թ. I դդ.) շերտերից, իրենց զուգահեռներն են գտնում հատկապես մերձսևծովյան հուշարձաններից հայտնաբերված նույն դարաշրջանի նյութերում, ինչպես նաև հելլենիստական Եգիպտոսի և Պոմպեյի պեղումներից ձեռք բերված երկաթե առարկաների մեջ[10]։ Հիշատակված զուգահեռներից ամենավաղ նմուշները թվագրվում են մ. թ. ա. II, իսկ ամենաուշը՝ մ. թ. III դարով։ Ինչպես ձևերով ու չափերով, այնպես էլ ժամանակաշրջանով մեր դանակները աղերսվում են դրանց հետ։ Հավանական է, որ Արմավիրում և Արտաշատում հանդիպող այգեգործական դանակների նոր բնորոշ ձևը անտիկ աշխարհի հետ Հայաստանի ունեցած մշակութային փոխհարաբերությունների արդյունքն է հանդիսանում։

Անտիկ դարաշրջանի հուշարձանների պեղումների ժամանակ երկաթե իրերից ամենամեծ քանակությամբ հանդիպում են դանակները, որոնք բոլոր ժամանակներում տնտեսության մեջ լայնորեն տարածված են եղել և գործածվել են տարբեր նպատակներով։ Գյուղատնտեսության մեջ դանակները օգտագործվել են մանր աշխատանքների համար, հատկապես՝ բերքահավաքի ժամանակ։ Երկաթե դանակների հիմնական ձևերը ընդօրինակված են բրոնզե

---

6 Б. А. Куфтин, Археологические раскопки в Триалети, Тбилиси, 1941, էջ 267։

7 С. М. Казиев, Альбом кувшинных погребений Мингечаура, Баку, 1960, աղ. 35։

8 И. Т. Кругликова, Сельское хозяйство Боспора, М., 1975, էջ 173, 176։

9 Բ. Ն. Առաքելյան, Հին Արտաշատ, էջ 29։

10 И. Т. Кругликова, նշվ. աշխ., էջ 179։



Ա.ղ. III



Ա.ղ. IV

օրինակներից։ Ուրարտական և վաղ հայկական դարաշրջանում հաստատուն ձև են դառնում ուղիղ և կեռ շեղբով դանակները (աղ. II, 8, 9, 10, աղ. IV, 1, 2)։

Արմավիրի[11], Գառնիի[12] և Արտաշատի[13] պեղումներով հայտնաբերված անտիկ դարաշրջանի դանակները բաժանվում են երկու խմբի։ Առաջին խումբը կազմում են ուղիղ շեղբ ունեցող պոչուկավոր դանակները, որոնց երկարությունը պոչի հետ միասին 16—18 սմ է, լայնությունը՝ 3—5 սմ։ Դանակի պոչը կամ արվում էր սրածայր՝ փայտե կոթի մեջ մտնելու նպատակով, կամ էլ ունենում էր անցքեր դամերով փայտե կամ ոսկրե դաստապանը ամրացնելու համար։

Դանակների այս խմբից անջատվում է մի փոքրիկ ենթախումբ, որի հիմնական տարբերությունը համեմատաբար փոքր չափերի լինելն է։ Այս դանակների շեղբի երկարությունը 3—5 սմ է, որի շարունակությունը կազմում է փոքրիկ սրածայր պոչուկը։

Երկրորդ խումբն են կազմում կեռ շեղբ ունեցող դանակները՝ 14—18 սմ երկարությամբ և 4—5 սմ լայնությամբ։

Երկու խմբի դանակներն էլ հավանաբար լայնորեն կիրառվել են թե՛ բանջարանոցային և թե՛ այգեղործական կուլտուրաների մշակման ժամանակ։ Նույնպիսի դանակներ հանդիպում են Վրաստանի[14] և Ադրբեջանի[15] հելլենիստական հուշարձաններում։ Մեր օրինակները նույնպես լինելով հելլենիստական շերտերից, կարելի է թվագրել մ. թ. ա. II—I դդ.։

Երկաթյա գյուղատնտեսական գործիքների մեջ հետաքրքիր խումբ են կազմում տաշտաքերները (կամ ակիշները)։ Այս գործիքները մինչև այժմ էլ գործածվում են հայկական գյուղերում՝ հաց թխելու ժամանակ։ Տաշտաքերի սեղանաձև, լայնաբերան ծայրով հացթուխը մաքրում էր տաշտի և թոնրի պատերը, կտրում խմորը, իսկ հակառակ կեռ ծայրով թոնրից դուրս էր քաշում տաք հացը (աղ. II, 3, 4, 5, աղ. IV, 3)։ Ուրարտական Արգիշտիխինիլի քաղաքից հայտնաբերված տաշտաքերները ձևով քիչ են տարբերվում մեզ հետաքրքրող օրինակներից, և դրանք կարելի է համարել անտիկ տաշտաքերների նախատիպերը[16]։ Նման գործիքներ հայտնի են նաև Դվինի վաղ միջնադարյան շերտերի պեղումներից[17]։ Անտիկ դարաշրջանի տաշտաքերներից երկուսը գտնվել են Արմավիրում[18], մեկը՝ Գառնիում։ Արմավիրի օրինակների (ՊՊԹ 71 թ. /78, 72 թ. /15) ձևով ու չափերով, ինչպես նաև աշխատանքային մասի ուրվագծով միատեսակ լինելը հուշում է հավանաբար նույն դարրնի մոտ պատրաստված լինելու հանգամանքը։ Գործիքի ընդհանուր երկարությունը 26 սմ է։ Տաշտաքերի Գառնիի օրինակը (ՊՊԹ 1963/30) տարբերվում է նախորդներից, կազմելով առանձին ձև։ Նրա քերիչ մասը ձվաձև է (լայնքը՝ 8 սմ), իսկ պոչի մասը թերի է և դժվար է որևէ բան ասել նրա երկարության ու ձևի մասին։

Մյուս հետաքրքիր գործիքը (աղ. II, 2, աղ. IV, 4) Արմավիրի վաղ հելլենիստական շերտից գտնված կացնաձև իրն է (ՊՊԹ 73 թ. /31)[19]։ Այն հավանաբար օգտագործվել է որպես ցաքատ, մացառուտները և ավելորդ թփուտները կտրելու համար։ Միաժամանակ այն կարող էր գործածվել որպես մարտական կացին[20]։ Ցաքատ-կացինն ունի շատ տարօրինակ ձև։ Նրա 6,5 սմ երկարության պոչի վրա արված է անցք՝ փայտե կոթը հագցնելու համար։ Գործիքի բավական ոանգվածեղ, հարվածող մասի ծայրը, քիչ նեղանալով, կորանում է դեպի ներքև։ Հարվածող մասը ունի 20,5 սմ երկարություն, որը բավական մեծ է, եթե համեմատելու լինենք նախորդ և հետագա շրջանի կացինների հետ։ Իսկ եթե մտովի վերականգնելու լինենք ցաքատով կատարվող աշխատանքային պահը, ապա անկասկած է, որ գործիքը աշխատեցնողը պետք է գործադրեր ավելի մեծ ուժ (ստանալով ավելի շոշափելի արդյունք), քան սովորական կացինը օգտագործելիս։ Այս ցաքատ-կացինը իր յուրահատուկ ձևով Հայաստանի թե՛ նախորդ և թե՛ հաջորդ շրջանում զուգահեռներ չունի։ Որպես նախատիպ կարելի է մատնանշել

---

11 Գ. Ա. Տիրացյան, Արմավիրի պեղումները, ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր» (հաս. գիտ.), 1974, № 12, էջ 65։

12 Б. П. Аракелян, Гарни—II, էջ 47, 48։

13 Ж. Д. Хачатрян, Гарни—V, Ереван, 1976, էջ 85։

14 Д. Л. Махутайшвили, Уплисцихе—I, Тбилиси, աղ. II։

15 С. М. Казиев, նշվ. աշխ., աղ. XXXVI.

16 А. А. Мартиросян, Аргиштихинили, Ереван, 1974, էջ 141, նկ. 87б.

17 Ա. Քալանթարյան, Դվինի նյութական մշակույթը IV—VIII դդ., Երևան, 1976, էջ 17։

18 Գ. Ա. Տիրացյան, Արմավիրի պեղումները, ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր» (հաս. գիտ.), 1973, № 5, նկ. 3—4 և 1974, № 12, նկ. 3դ.։

19 Գ. Ա. Տիրացյան, Արմավիրի 1973 թ. պեղումների նյութերից, «Պատմա-բանասիրական հանդես», 1974, էջ 178, նկ. 4։

20 Նույն տեղում, էջ 178։

Կոլքիսի բրոնզեդարյան ցաքատ-կացինները[21], իսկ որպես զուգահեռ՝ նույն տարածքում հայտնաբերված անտիկ դարաշրջանի երկաթե կացինները[22]։ Նման ցաքատ հայտնի է նաև Մերձսևծովյան շրջանի Ցերելդայի ուշ անտիկ դարաշրջանով թվագրվող դամբարաններից[23]։

Իրրև բերքահավաքի գործիք հնագույն ժամանակներից ի վեր Հայկական լեռնաշխարհում գործածվել են փայտե, բրոնզե և երկաթե եղաններ։ Ամենատարածվածները եղել են փայտե երկժանիները, որոնք փտելու պատճառով մեզ չեն հասել։ Եռաժանիների վերաբերյալ արվել են տարբեր ենթադրություններ։ Դիտնականների մեծ մասը այն համարել է պաշտամունքային առարկա։ Ծակ դը Մորդանը բրոնզե եղանները կապում էր կենդանիների պաշտամունքի հետ[24]։ Սակայն կասկածից վեր է, որ դրանք միաժամանակ օգտագործվել են տնտեսության մեջ, գլխավորապես բերքահավաքի ժամանակ[25]։ Եռաժանիները կարող էին ծառայել նաև որպես զենք։ Ուրարտական շրջանում մեծ տարածում գտած եռաժանիները, որոնք հայտնաբերվել են Թոփրաք-Կալեի և Կարմիր-բլուրի պեղումների ժամանակ, համարյա չեն տարբերվում ժամանակակից եղաններից[26]։

Անտիկ դարաշրջանում էլ Հայաստանում եռաժանիները տնտեսության մեջ անկասկած օգտագործվել են։ Գառնիից հայտնաբերված փոքրիկ եռաժանին (ՊՊԹ 1969/92) Բ. Ն. Առաքելյանը իրավացիորեն համարում է պաշտամունքային, համեմատելով այն Պոսեյդոնի եռաժանու հետ[27]։ Հավանական է, որ այն պատրաստված է եղել այդ շրջանում գործածության մեջ եղած եռաժանիների օրինակով։ Այս գործիքը ունի 30 սմ ընդհանուր երկարություն, մատների երկարությունը 7,5—8 սմ է։ Մի մատը կոտրվել է և եռակցվել դեռևս հնում։ Եռաժանին ունի խողովակաձև կոթառ՝ փայտե կոթը հագնելու համար (աղ. II, 1, աղ. IV, 5)։

Երկաթե եռաժանի գտնվել է Կարինի մոտ վերջերս պեղված հելլենիստական դարաշրջանի դամբարանում։ Այն հավանաբար օգտագործվել է որպես զենք[28]։

Գյուղատնտեսական գործիքների ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս մասնակի հետևություններ անել տեխնոլոգիական որոշ հարցերի վերաբերյալ։ Այսպես, Արմավիրից հայտնաբերված (ՊՊԹ 71 Բ. 136) մանգաղի կոթառի կոտրված մասում, չնայած քայքայված վիճակին, ուրվագծվում է գործիքի պատրաստման հետևյալ պատկերը. այն պատրաստված է եղել երեք մետաղյա թիթեղներից, որոնք եռքի միջոցով միացվել են միմյանց։ Թիթեղներից մեջտեղինը արված էր ավելի երկար, դիմացկունության նպատակով պատրաստված էր լինում պողպատից և սրելուց հետո դառնում էր մանգաղի կտրիչը։ Հետաքրքիր է նաև այն փաստը, որ անտիկ շրջանում արդեն հայ դարբինները տիրապետում էին երկաթյա երկու բեկորներ պղնձի միջոցով իրար զոդելու եղանակին։ Այդ է վկայում Գառնիից հայտնաբերված եռաժանու կոտրված և այնուհետև զոդված մատը։ Իհարկե, երկաթյա գործիքների պատրաստման տեխնոլոգիական հարցերի մասին ավելի ստույգ և հիմնավոր կարելի կլինի խոսել միայն նրանց մետալոգրաֆիական ուսումնասիրությունից հետո։

Այսպիսով, չնայած իրենց ոչ մեծ թվին, Հայաստանի անտիկ դարաշրջանի երկաթյա գյուղատնտեսական գործիքները հնարավորություն են տալիս որոշ պատկերացում կազմելու տնտեսության այդ ճյուղում գործածվող արտադրական միջոցների մասին։ Այս դարաշրջանում գործիքների ձևերը ավելի կատարելագործվում են, չափերով դառնում ավելի փոքր, միաժամանակ հանդես են գալիս նոր գործիքներ։

Վ. ՋԻՆՋԻՐՋՅԱՆ

---

21 Д. П. Коридзе, К истории колхской культуры, Тбилиси, 1965.

22 В. Е. Артилаква, Железообрабатывающее ремесло древней Грузии, Тбилиси, 1976, էջ 68, աղ. 99։

23 Ю. Н. Воронов, Тайна Цебелдинской долины, М., 1975, էջ 55։

24 J. de Morgan, Mission scientifique en Caucase, I—II, Paris, 1889, էջ 134։

25 Т. С. Хачатрян, Материальная культура древнего Артика, Ереван, 1963, էջ 156։

26 Б. Б. Пиотровский, Ванское царство, М., 1959, էջ 163, նկ. 24։

27 Б. Н. Аракелян, Гарни—II, էջ 46, նկ. 14։

28 M. Mellink, Archaeology in Asia Minor, „American Journal of Archaeology", 1966, № 2.